ՀԱՆԳԻՍՏ
ԳԵՐ. Տ. ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԻՐՈՒՆՅԱՆԻ
(1891—1966)

Երկարատև հիվանդությունից հետո, հոկտեմբերի 9-ին, կիրակի, Կահիրեում, ի Տեր հանգչում Եգիպտոսի հայոց առաջնորդ, գեր. Տ. Մամբրե արքեպ. Սիրունյանը։

Լուսահոգի Տ. Մամբրե Սրբազանը, ավազանի անունով Արշամ, ծնվել է 1891 թվականին, Կարին քաղաքում։ Նախնական կրթությունը ստացել է տեղի նախակրթարանում, ապա ընդունվել է Արմաշի դպրեվանքը, որի դասընթացն ավարտելով 1913 թվականին սարկավագ է և 1916 թվականին կուսակրոն քահանա է ձեռնադրվել Տ. Մեսրոպ եպս. Նարսյանից։

Երիտասարդ վարդապետը այնուհետև կոչվում է թեմական, վարչական, կրթական պատասխանատու պաշտոնների։

1918 թվականին նշանակվում է առաջնորդական փոխանորդ Պորտ-Սաիդի վրանաքաղաքի, և տեսուչ՝ Հ. Բ. Ը. Միության որբանոցի։

1920 թվականին Մերսին քաղաքի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում Տ. Սահակ կաթողիկոս Խապայանից ստանում է ծայրագույն վարդապետական աստիճան։ 1923 թվականին, Եգիպտոսի հայոց առաջնորդ Տ. Թորգոմ արքեպ. Գուշակյանի օրոք, նշանակվում է Աղեքսանդրիայի հայոց առաջնորդական փոխանորդ, պաշտոն, որը կատարում է մեծ արդյունավորությամբ։

1931 թվականին ընտրվում է Եգիպտահայ թեմի առաջնորդական փոխանորդ, և այդ դաշտոնի վրա եպիսկոպոսանում է 1933 թվականին, լուսահոգի Տ. Տ. Խորեն Ա կաթողիկոսի շնորհաբաշխությամբ։

1936 թվականին Մամբրե Սրբազանը, իր եկեղեցանվեր և ազգօգուտ գործունեության համար, արժանանում է հայրապետական բարձր գնահատության՝ Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի շքանշանին։

1945 թվականին ընտրվում է Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ, ուր ծավալում է թեմական, վարչական, կրթական, հասարակական բեղուն գործունեություն մինչև իր մահը։

Տ. Մամբրե արքեպիսկոպոսի մահով Հայ. առաք. եկեղեցին կորցնում է հավատավոր, նվիրյալ, իր կոչման ու առաքելության բարձ-

րության վրա դանվող հոգևորականներից մեկին։

Վեհափառ Հայրապետը Տ. Մամբրե արքեպիսկոպոսի մահվան առթիվ խորապես վշտահար, հոկտեմբերի 12-ին հետևյալ հեռագիրն ուղարկեց մեր նվիրապետական Աթոռներին և թեմերին.

«Վշտով կծանուցտնենք, որ Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյան՝ բարեջան և բազմավաստակ առաջնորդ Եգիպտոսի հայոց, հանգյտվ ի Տեր։ Կհրահանգենք՝ բոլոր եկեղեցիներու մեջ կատարել հոգեհանգիստ, կիրակի օր՝ հոկտեմբերի 16-ին՝ խոսելով անոր անբասիր կյանքի և նվիրյալ հոգևոր գործունեության մասին։ Թող Տերը լուսավորե հանգուցյալի հոգին և անսասան պահե Հայաստանյայց եկեղեցին»։

Վեհափառ Հայրապետի հրահանգով Տ. Մամբրե Սրբազանի թաղման ներկա են եղել հանուն Մ. Աթոռի, գեր. Տ. Շահն եպս. Աճեմյանը և Տ. Ներսեհ վրդ. Բապուճյանը։

Հոկտեմբերի 16-ին, Մ. Տաճարում, հավարտ Ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվեց հոգեհանգստյան մասնավոր պաշտոն, նորոգ հանգուցյալ Տ. Մամբրե արքեպիսկոպոսի հիշատակին։

Արարողությունից առաջ հոգ. Տ. Գարեգին ծ. վրդ. Գազանճյանը հուզիչ զամբանական խոսեց, վեր հանելով հանգուցյալ Տ. Մամբրե Սրբազանի կյանքի ուսանելի կողմերը։

Թող Աստված իր անթառամ փառքին արժանացնի հանգուցյալ Տ. Մամբրե արքեպիսկոպոսի հոգին, դասելով նրան հայ եկեղեցու բարի ու նվիրյալ քաջ հովիվների շարքին։